«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 76-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 76-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Նախադպրոցականհաստատություններ սաների ընդունելության կարգը սահմանելու մասին» 76-Ն հրամանի հավելվածի՝

- 7-րդ կետում «սեպտեմբերի 1-ից» բառերից հետո լրացնել «և ավարտվում է օգոստոսի 31-ին։» բառերով.
- 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է.

1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով ծնողի (ծնողների) երեխաներին.

2) երեք և ավելի երեխա ունեցող ծնողի (ծնողների) երեխաներին.

3) զոհված զինծառայողի երեխային, քրոջը, եղբորը.

4) երկկողմանի ծնողազուրկ երեխաներին.

5) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող զինծառայող ծնողի երեխաներին.

6) կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

երեխաներին.

7) տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաներին.

8) տվյալ ուսումնական հաստատության (կազմակերպության) աշխատակիցների երեխաներին։».

- 16-րդ կետից հետո լրացնել նոր՝ 16.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«սույն կարգով սահմանված առաջնահերթությունների իրավունքից օգտվելու համար հերթագրումն իրականացվում է մինչև տվյալ օրացուցային տարվա մարտի 1-ը։»

- 24-րդ կետում «օգոստոսի 20-ից մինչև 30-ը» բառերը փոխարինել «օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը» բառերով։

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։